

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՐԻԱՄ ԱՐԹՈՒՐԻ ԱԴԱՄՅԱՆ

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ «ՏԱՐԻՔ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ
ԼԵԶՎԱՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ժ. 02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.գ.դ., պրոֆեսոր Աբրահամյան Կարինե Շահջանի

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ Բ.գ.դ., պրոֆեսոր Խաչատրյան Լալիկ Մնացականի
Բ.գ.թ., դոցենտ Ղազարյան Հասմիկ Զաքարի

Առաջատար
կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը՝ 15:00 - ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ –ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի հոկտեմբերի 17-ին:

**Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝**

Բ.գ.թ., դոցենտ Ն. Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Տարիք» իմաստային դաշտն իր ենթախմբերով և արտահայտած իմաստային նրբերանգներով «մարդու հատկանիշներ» ավելի ծավալուն իմաստային դաշտի թերևս ամենամեծ ու ամենահարուստ խմբերից է:

Հայտնի է, որ տարիքային պարբերացումն առնչվում է անձի՝ տարբեր ոլորտների համաչափ զարգացման, մանկավարժական, հոգեբանական, հասարակական-մշակութային հասունացման, ինչպես նաև իրավական, տնտեսական, բարոյական և ազգագրական գործոնների, սկզբունքների և ավանդույթների հետ: Առհասարակ աշխարհում անհատի տարիքը մարդուն՝ որպես հասարակության անքակտելի մաս դիտարկելու, այդ հասարակությանը ամբողջապես վերագրելու և հասարակության մեջ ունեցած նրա դիրքը արժևորելու կարևոր գործոն է: Այն անհատին ճանաչելու, նրան ընկալելու այնպիսին, ինչպիսին կա, նույնականացնելու կարևորագույն միջոցներից է:

Բնականաբար, «տարիք» հասկացությունը կարող է վերաբերել երկրագնդի վրա գոյություն ունեցող յուրաքանչյուր օբյեկտի, սակայն գործնականում որևէ երևույթի համար տարիքային պարբերացումներն այսչափ տարբերակված չեն, որքան մարդու համար: Այս խնդիրը մշտապես եղել է փիլիսոփաների, տարբեր ոլորտների վերլուծաբանների ուսումնասիրության կենտրոնում:

Կարևոր է նշել, որ «տարիք» հասկացությունը նախևառաջ ունի համամարդկային նշանակություն և ապա ազգային ու մշակութային առանձնահատկություններ, և ինչպես ցույց են տալիս տարբեր ուսումնասիրությունները, այն տարբեր լեզվամշակույթներում տարբեր մեկնաբանություններ է ստացել: Ուսումնասիրվող հասկացությունը բավականին բազմաշերտ է և երբեմն կարող է ներկայացվել այլ հասկացությունների հետ անքակտելի կապով:

Հետազոտության օբյեկտը «տարիք» հասկացության լեզվականացման հնարավորությունների ուսումնասիրությունն է ժամանակակից անգլերենում և հայերենում, ինչպես նաև ստացված արդյունքների զուգադրական վերլուծությունը ճանաչողական լեզվաբանության շրջանակներում:

Հետազոտության առարկան են անգլերենի և հայերենի բացատրական բառարաններից քաղված այն միավորները, որոնք արտահայտում են «տարիք» իմաստը (անգլերենում՝ 69, հայերենում՝ 119 միավոր): Ուսումնասիրվող անգլերեն լեզվանյութի համատարած

ընտրանքը կատարվել է Oxford Advanced Learner's Dictionary of Current English¹, ինչպես նաև Dictionary by Merriam-Webster² բառարաններից, իսկ հայերենի՝ «տարիք» իմաստ արտահայտող միավորներինը՝ ակադեմիկոս Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ից³, ինչպես նաև պրոֆեսոր Ա. Մ. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ից⁴: Թարգմանությունները տրվում են ըստ Հ. Ա. Ասմանգույանի և Մ. Ի. Հովհաննիսյանի «Անգլերեն-հայերեն բառարանի»⁵: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են նաև անգլերենի British National Corpus և հայերենի Արևակ ազգային կորպուսները:

Աշխատանքի գիտական **նորույթն** այն է, որ «տարիք» իմաստ արտահայտող միավորներն առաջին անգամ են ենթարկվում նմանատիպ լեզվաճանաչողական վերլուծության, ինչպես անգլերենի, այնպես էլ հայերենի շրջանակներում: Կատարվում է նշված իմաստային դաշտի զուգադրական-տիպաբանական վերլուծություն, ներկայացվում են դրանց միավորների նմանություններն ու տարբերությունները: Առաջին անգամ փորձ է արվում մի կողմից ներկայացնել «Սերունդների տեսության» առանցքային առանձնահատկությունները հայերեն, մյուս կողմից՝ ստեղծել որոշակի կապեր ճանաչողական լեզվաբանության, մասնավորապես՝ լեզուների տիպաբանության, լեզվամշակութաբանության, ինչպես նաև սոցիոլոգիայի, հոգեբանության և կենսաբանության հետ. դա մեկ անգամ ևս կարող է ապացուցել ժամանակակից գիտության մարդակենտրոն ճանաչողական բնույթը:

Հետազոտության **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ վերոնշյալ տիպաբանական բնույթի զուգադրական ուսումնասիրությունը կատարվում է երկու հեռավոր ցեղակից, ձևաբանական տարբեր տիպերի պատկանող լեզուների նյութի հիման վրա: Այսինքն՝ որոշակիորեն փորձ է արվում վեր հանելու ազգային տարբեր լեզվամտածողությունների առանձնահատկությունները և, որ շատ կարևոր է, դրանց արտացոլումը ուսումնասիրվող լեզուներում:

Աշխատանքի հիմնական **նպատակն** է զուգադրական վերլուծության միջոցով վեր հանել, ձևավորել և զուգադրել «տարիք» իմաստային դաշտը անգլերենում և հայերենում, ներկայացնել ուսումնասիրվող իմաստային դաշտում առկա ներհամակարգային հարաբերությունները, ինչպես նաև վեր հանել տարիք հասկացության լեզվամշակութային

¹ Hornby A. S., Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, 2005.

² Dictionary by Merriam-Webster: <https://www.merriam-webster.com/>

³ Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան», Երևան, 1976:

⁴ Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Հայկական ՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1967:

⁵ Ասմանգույան Հ.Ա., Հովհաննիսյան Մ.Ի., Անգլերեն-հայերեն բառարան, «Հայաստան», Երևան, 1984:

առանձնահատկությունները, կատարել հանգամանալից վերլուծություն ոչ միայն ճանաչողական լեզվաբանության, այլև ընդհանուր ճանաչողական գիտության շրջանակներում:

Ըստ նպատակի՝ աշխատանքի մեջ առաջադրվել և լուծում են ստացել հետևյալ **խնդիրները**՝

- ներկայացնել «տարիք» հասկացության միջգիտակարգային բնույթը, տարիքային խմբերի ավանդական դասակարգումները,

- վերլուծել «Սերունդների տեսությունը» և վերջինիս լեզվականացման առանձնահատկությունները ուսումնասիրվող լեզուներում,

- ըստ բացատրական բառարանների՝ առանձնացնել անգլերենի և հայերենի՝ տարիք ցույց տվող միավորները, դասակարգել դրանք ըստ տարբեր գործոնների, ուսումնասիրել և զուգադրել դրանցում առկա ենթախմբերը,

- դիտարկել տարիք ցույց տվող միավորների իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները զուգադրվող լեզուներում,

- ներկայացնել ուսումնասիրվող միավորների ոճական նշույթավորվածությունը, փորձել բացահայտել իմաստային վերաբերելիության դրսևորումները,

- ուսումնասիրել անգլերենի և հայերենի՝ «տարիք» իմաստ արտահայտող բառերի լեզվաճանաչողական առանձնահատկությունները՝ վեր հանելով ընդհանրությունները և տարբերությունները,

- հիմք ընդունելով հարցումների տվյալները՝ վեր հանել անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի միավորների զուգորդումները:

Վերլուծության ընթացքում այդ խնդիրների լուծման համար կիրառվել են լեզվաբանական հետազոտության հետևյալ **մեթոդները**՝ զուգադրական, տիպաբանական, նկարագրական, բաղադրիչների վերլուծության, հարցման:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը իմաստային դաշտի, բառիմաստային խմբերի և վերջիններիս ներհամակարգային հարաբերությունների մասին տեսությունների վերլուծություններն են: Լեզվաբաններ Յ. Տրիրի, Վ. Պորցիգի, Ա. Բոնդարկոյի, Օ. Ախմանովայի, Ռ. Գինզբուրգի, Բ. Գորոդեցկու, Յու. Կարաուլովի, Դ. Շմելյովի, Զ. Պոպովայի, Յու. Ապրեսյանի, Կ. Աբրահամյանի, Գ. Հակոբյանի, Լ. Հովհաննիսյանի, ինչպես նաև Զ. Սայիդի և Զ. Լայոնզի ուսումնասիրությունները վեր են հանում «իմաստային դաշտ» հասկացության տեսական հիմքերը. դա հնարավորություն է տալիս մեզ քննության ենթարկելու զուգադրվող լեզուների «տարիք» իմաստային դաշտը և դրա միավորները:

Ներկայացվող ատենախոսության **տեսական արժեքն** այն է, որ աշխատանքը որոշակի ներդրում է առհասարակ իմաստային դաշտի տեսության՝ արդեն իսկ գոյություն ունեցող ուղղությունների շրջանակում, քանի որ այն ևս մեկ փորձ է՝ ամփոփ ներկայացնելու երկու զուգադրվող լեզուների «տարիք» իմաստային դաշտի լեզվական նյութը՝ իմաստաբանական, բառակազմական, թարգմանական, լեզվամշակութային և հոգելեզվաբանական տեսանկյուններից: Տվյալ աշխատանքի շնորհիվ նաև որոշ չափով կլրացվի այն բացը, որն առկա է խոսքիմասային դասակարգումների ուսումնասիրություններում ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում ճանաչողական լեզվաբանության բնագավառում: Որպես տեսական արժեք կարելի է դիտարկել նաև այն կապը, որը ստեղծվում է սույն ատենախոսության մեջ կատարված «տարիք» իմաստային դաշտի և «Սերունդների տեսության» զուգադրական տիպաբանական ուսումնասիրության շնորհիվ ճանաչողական լեզվաբանության, լեզվամշակութաբանության, ժողովրդագրության, հոգելեզվաբանության միջև:

Աշխատանքի **գործնական արժեքն** այն է, որ ատենախոսության արդյունքները կարելի է օգտագործել անգլերենի և հայերենի զուգադրական տիպաբանության և բառագիտության դասընթացներում, ինչպես նաև այդ երկու լեզուների բառային համակարգերի հետագա զուգադրական ուսումնասիրությունների դիտարկման ընթացքում: Աշխատանքում առաջ քաշված դրույթները, ձեռք բերված արդյունքներն ու վերլուծությունները կարող են նպաստել բացահայտելու իմաստային դաշտերի ընդհանրությունները և յուրահատկությունները զուգադրվող լեզուներում: Բացի այդ՝ «տարիք» հասկացության ընկալումը անգլոամերիկյան և հայկական լեզվամշակույթներում կարող է օժանդակել միջմշակութային տարբերությունների բացահայտմանը և հաղթահարմանը:

Հետազոտության նյութի փորձաքննությունը. ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են յոթ գիտական հոդվածներում: Աշխատանքում կիրառված մոտեցումները քննարկվել են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի նիստերում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ իրենց ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Վերջինս ընդգրկում է ուսումնասիրության ժամանակ օգտագործված տեսական գրականությունը՝ անգլերեն, հայերեն, ռուսերեն լեզուներով, բառարաններ, ինչպես նաև անգլերենի և հայերենի ազգային կորպուսներ (BNC, Արևակ) և համացանցային կայքեր՝ ընդհանուր թվով 126 նիշ:

Աշխատանքը ամբողջանում է անգլերենի և հայերենի՝ «տարիք» իմաստ արտահայտող բառերի ցանկերը ամփոփող հավելվածներով, որոնցում ներկայացվում են այն միավորները՝ իրենց բառարանային բացատրություններով, որոնց անդրադարձ է կատարվում ատենախոսության բաժիններում: Աշխատանքի ընդհանուր ծավալը 184 էջ է:

Ներածության մեջ ներկայացվում են հարցի համառոտ պատմությունը, տարբեր դարաշրջանների և գիտական դպրոցների ներկայացուցիչների հետաքրքրությունը «տարիք» հասկացության նկատմամբ, այդ թվում անդրադարձ է կատարվում թե՛ հույն փիլիսոփաներին, թե՛ ժամանակակից «Սերունդների տեսությանը»:

Առաջին գլուխը վերնագրված է «**«Տարիք» հասկացության ըմբռնումը տարբեր գիտություններում»** և բաղկացած է չորս ենթագլխից: Առաջին ենթագլխում (««Տարիք» հասկացության միջգիտակարգային բնույթը») ներկայացվում են «տարիք» հասկացության մեկնաբանությունները տարբեր գիտություններում՝ լեզվաբանության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, հոգեբանության, մանկավարժության, կենսաբանության մեջ (այսպես, լեզվաբանությունն առհասարակ տարիքը դիտարկում է սանդղակների տեսքով, որոնք հատվում են և հարում մեկը մյուսին, հոգեբանության մեջ առանձնացվում է մարդկային տարիքի 10, մանկավարժության մեջ՝ 7, իսկ կենսաբանության մեջ՝ 6 շրջան: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն առաջարկում է տարիքի 8 փուլ):

Այնուհետև ներկայացվում են տարիքային ավանդական դասակարգումները անգլոամերիկյան և հայկական լեզվամշակույթներում: Այսպես, անգլոամերիկյան մշակույթում ընդունված է տարիքային աճի ու զարգացման հետևյալ պարբերացումը՝

1. ***Pregnancy***
2. ***Infant (0–12 months)***
3. ***Toddler (1-3 years)***
4. ***Child (4-8 years)***
5. ***Puberty (9-13 years)***
6. ***Adolescent (14-18 years)***
7. ***Adult (19-30 years)***
8. ***Middle adult (31-50 years)***
9. ***Senior years, or old age (51+ years)***⁶:

⁶Տե՛ս https://med.libretexts.org/Courses/At%2C_Childhood%2C_and_Adolescent_Nutrition/12.02%3A_The_Human_Life_Cycle

Հայաստանում 1965 թ.-ից մինչ օրս կիրառվում է հետևյալ պարբերացումը՝

1. **Նորածին (1 –10 օրական)**
2. **Կրծքային տարիք (10 օրականից մինչև 1 տարեկան)**
3. **Մանկություն՝ իր երեք ենթախմբերով (վաղ, առաջին, երկրորդ) (1–12 տարեկան)**
4. **Դեռահաս հասակ (13 –16 տարեկան)**
5. **Պատանեկան հասակ (17 –21 տարեկան)**
6. **Չափահաս տարիք՝ իր երկու ենթախմբերով (առաջին և երկրորդ փուլեր) (22 –60 տարեկան)**
7. **Տարեց հասակ (61 –74 տարեկան)**
8. **Ծերունական տարիք (75 տարեկան և ավելի)⁷:**

Վերոբերյալ սանդղակները վկայում են, որ անգլիական և ամերիկյան մշակույթներն ավելի մանրամասն են փորձում ներկայացնել տարիքային շրջանները՝ դրանցում ներառելով նույնիսկ մարդու ֆիզիկական հասունացման փուլերը՝ **Toddler-նոր քայլել սկսող երեխա** և **Puberty-սեռահասունություն**: Ուշագրավ է, սակայն այն, որ լեզուներում ունենք հակառակ պատկերը. հայերենում «տարիք» իմաստ արտահայտող բառային միավորներն ավելի տարբերակված են, քան անգլերենում. դրա մասին է վկայում այդ միավորների թվային անհամապատասխանությունը (անգլերեն՝ 69 միավոր, հայերեն՝ 119 միավոր): Մեր կարծիքով սա պայմանավորված է նրանով, որ ի տարբերություն հայկական մշակույթը կրողների, այսօրվա անգլոամերիկյան հանրության համար մարդու տարիքի չափանիշը որպես առաջնային այլևս չի ընկալվում:

Առաջին գլխի երրորդ ենթազխում անդրադարձ է կատարվում տարիքին հարող «Սերունդների տեսությանը», որը, 20-րդ դարում ծագելով սոցիոլոգիայում (հասարակագիտություն), գրավել է նաև այլ գիտությունների ներկայացուցիչների ուշադրությունը: Տեսության հիմքում ընկած է այն գաղափարը, որ անհատի վարքագիծը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որտեղ է նա ապրել և մեծացել մինչև իր տասնչորս տարին լրանալը, քանի որ մարդու արժեհամակարգը ձևավորվում է մինչև այդ տարիքը և ուղեկցում նրան ամբողջ կյանքում: Ըստ հեղինակների՝ չորս սերունդների կյանքի յուրաքանչյուր շրջանին բնորոշ են բնավորության տիպական գծեր:

⁷ Տե՛ս ՀՍՀ, «Հայկական Հանրագիտարան» հրատարակչություն, Հ. XI, Երևան, 1985, էջ 615:

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ				
<u>Կյանքի փուլը</u>	<i>Իդեալիստներ</i>	<i>Ակտիվիստներ</i>	<i>Հերոսներ</i>	<i>Արվեստագետներ</i>
Մանկություն	Հանգիստ	Պաշտպանված	Լարված	Չափազանց պաշտպանված
Երիտասարդություն	Արտացոլող	Մրցող	Կառուցող	Վերաձևավորող
Միջին տարիք	Դատող	Սպառված	Էներգետիկ	Փորձարկող
Ծերություն	Իմաստուն, հեռատես	Համոզիչ	Վստահ, Ջբաղված	Զգացմունքային, ճկուն
<u>Նշանաբան</u>	Ճշմարտություն	Համոզում	Ուժ	Սեր
<u>Դրական Հատկանիշներ</u>	Սկզբունքային, վճռական	Ըմբռնող, գործնական	Ռացիոնալ, իրավասու	Հոգատար, լայնախոհ
<u>Բացասական Հատկանիշներ</u>	Եսասեր, անխիղճ, ամբարտավան	Նյութապաշտ, բարոյազուրկ	Հանդուգն, համարձակ, անտարբեր	Անվճռական, մեղավոր

Համեմատելով «Սերունդների տեսության» առաջարկած և անգլոամերիկյան և հայկական մշակույթների կողմից առանձնացված տարիքային պարբերացումները՝ կարող ենք արձանագրել, որ նշված տեսությունն առաջարկում է ավելի լայն և ընդհանրական պարբերացում, քան հայկական և անգլոամերիկյան մշակույթները. յուրաքանչյուր սերունդ ժամանակի ընթացքում ներառում է մշակույթների առաջարկած բոլոր պարբերացումները՝ համապատասխան հերթականությամբ:

Իսկ լեզվական առումով կարելի է պնդել, որ «Սերունդների տեսությունը» համալրում է լեզուների բառային ֆոնդը նոր հասկացությունների և բառերի նոր իմաստների ներմուծմամբ (*Generation theory, General issue, millennials, idealist, reactive, hero, artist, իդեալիստ, ակտիվիստ, հերոս, արվեստագետ, հազարամյակի սերունդ, X, Y, Z սերունդներ* և այլն):

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՃԻ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱՑՈՒՄՆԵՐ		
Անգլոամերիկյան	Հայկական	Սերունդների տեսություն
Pregnancy	-	-
Infant (0-12 months)	Նորածին (1 -10 օրական)	Արվեստագետներ (0-14 տարեկան)
Toddler (1-3 years)	Կրճքային տարիք (10 օրականից 1 տարեկան)	Հերոսներ (15-35 տարեկան)
Child (4-8 years)	Մանկություն (1 -12 տարեկան)	Ակտիվիստներ (36-56 տարեկան)
Puberty (9-13 years)	Դեռահաս հասակ (13 -16 տարեկան)	Իդեալիստներ (57-74 տարեկան)
Adolescent (14- 18 years)	Պատանեկան հասակ (17 -21 տարեկան)	Արվեստագետներ (75-92 տարեկան)
Adult (19-30 years)	Զափահաս տարիք (22 -60 տարեկան)	Հերոսներ (93 տարեկան և ավելի)
Middle adult (31-50 years)	Տարեց հասակ (61 -74 տարեկան)	
	Ծերունական տարիք (75 տարեկան և ավելի)	

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում («Անգլերենի և հայերենի «տարիք» իմաստ արտահայտող բառային միավորների դասակարգումը՝ ըստ համապատասխան տարիքային սանդղակների») կատարվում է ուսումնասիրվող միավորների դասակարգում՝ ըստ անգլոամերիկյան և հայկական լեզվամշակույթներում ընդունված տարիքային աճի ու զարգացման պարբերացումների: Ուսումնասիրության արդյունքում երևում է, որ ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում ամենաշատ միավորներ ունեցող պարբերացումը *Senior years, or old ge/Ծերունական տարիք* պարբերացումն է: Մեր կարծիքով այս խմբերում միավորների բազմազանությունը կապված է մեղմասացությունների կիրառման հետ, երբ ոչ հաճելի արտահայտությունները փոխարինվում են ավելի մեղմ հոմանիշներով: Քանի որ ծերությունը համարվում է կյանքի

մայրամուտ, այն շրջանցելու և «ծեր» բառից խուսափելու նպատակով լեզուներում սովորաբար ստեղծվել են մեղմասացություններ: Օրինակ՝ *elderly, long-lived, over-the-hill, երկարակյաց, երկարամյա, հասակավոր* և այլն: Հետաքրքիր է նաև այն, որ *Adult, Middle adult/Չափահաս տարիք* խմբերը զուգադրվող լեզուներում գրեթե նույնն են միավորների թվաքանակով՝ 4 միավոր անգլերենում՝ *grown-up, middle-aged, adult, mature*, 3 միավոր հայերենում՝ *միջահասակ, չափահաս, հասուն*: Քանի որ չափահասությունը ավելի չեզոք հասկացություն է, լեզուներում այս խումբը չի առանձնացել գնահատողականություն արտահայտող միավորներով, հետևաբար, այստեղ առկա է իմաստային համընկնում: Այս երևույթը չի նկատվում բերված մյուս խմբերում, այդ պատճառով էլ դրանց միավորների թվաքանակները անգլերենում և հայերենում չեն համապատասխանում:

Երկրորդ գլուխը՝ վերնագրված ««Տարիք» իմաստ արտահայտող բառային միավորների իմաստային առանձնահատկություններն անգլերենում և հայերենում», կազմված է վեց ենթագլխից և նվիրված է զուգադրվող լեզուների՝ «տարիք» իմաստ արտահայտող միավորների իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Սույն գլխի առաջին և երկրորդ ենթագլուխներում անդրադարձ է կատարվում «իմաստային դաշտ» հասկացությանը, դրաների համակարգային հարաբերություններին անգլերենում և հայերենում: Նշվում է, որ երկու լեզուներում էլ իմաստային դաշտի անդամների միջև հարաբերությունների տեսակների առկայությունն ու բացակայությունը համընկնում են (ինչպես անգլերենի, այնպես էլ հայերենի «տարիք» իմաստային դաշտի միավորներին բնորոշ են *սեռատեսականիշխությունը, տրամախաչումը, հոմանիշությունը, հականիշխությունը, աստիճանականությունը* և *փուլային, ժամանակային հարաբերությունները*, և բնորոշ չեն *հակազդեցությունը, մասամբողջական և տեղային հարաբերությունները*):

Միակ տարբերությունը անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտերի միավորների հարաբերությունների տեսակների միջև առաջանում է, երբ գործածվում են հայերենի բայերի պատճառական *-ացն-, -եցն-, -ցն-* ածանցները: Վերջիններս, ավելանալով բայերին, դրանց օժտում են հավելյալ իմաստով⁸ հղում կատարելով նախորդող և հաջորդող վիճակներին, օրինակ՝ *երիտասարդանալ-երիտասարդացնել, ծերանալ-ծերացնել, մեծանալ-մեծացնել, հասունանալ-հասունացնել* և այլն: Արդյունքում հայերենում ի հայտ են գալիս այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են *ձգտումը* և *վերհուշային հարաբերությունը*: Քանի որ

⁸ Տե՛ս Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, «Միտք» հրատ., Երևան, 1965, էջ 238:

նմանատիպ ածանցներ անգլերենում առկա չեն, այս երկու տիպի հարաբերություններն ուսումնասիրվող իմաստային դաշտում առհասարակ հնարավոր չէ վերարտադրել: Սակայն պատճառականության իմաստը անգլերենում արտահայտվում է **make+adj** կաղապարով, որը չի ներկայացվում որպես մեկ բառային միավոր և, հետևաբար, չի դիտարկվում որպես ուսումնասիրվող իմաստային դաշտի անդամ:

Երրորդ ենթագլխում («Ուսումնասիրվող իմաստային դաշտի բառային միավորների իմաստների բաղադրիչային վերլուծություն») կատարվում է զուգադրվող լեզուների «տարիք» իմաստ արտահայտող միավորների բաղադրիչների վերլուծություն, որի արդյունքում առանձնացվում են բառային տարբեր դասակարգումներ՝ *ըստ կոնկրետ տարիքի իմաստի, ըստ իմաստային վերաբերելիության և ըստ կյանքի կոնկրետ փուլի կամ կոնկրետ վիճակի իմաստի*: Բաղադրիչների վերլուծության արդյունքում ստացված իմակային կազմը ցույց է տալիս, որ անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտերը համընկնում են իրենց ամենահաճախ կրկնվող, հիմնական, միջուկային իմակներով: Այս իմակների շարքում առկա **child/երեխա-young/երիպասարդ-old/ծեր** իմակները համապարփակ կերպով կարող են արտահայտել տարիքային ողջ ցիկլը, քանի որ մատնանշում են կյանքի հիմնական փուլերը:

Չորրորդ ենթագլխում («Անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի բաղադրիչների բառակազմական առանձնահատկությունները») վեր են հանվում ուսումնասիրվող իմաստային դաշտում առկա փոխակարգման դեպքերը, որոնք ավելի բնորոշ են անգլերենին: Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ փոխակարգումն ավելի բնորոշ է ժամանակակից անգլերենին (43,5%), քան հայերենին (33%): Այս է վկայում փոխակարգման կաղապարների քանակը լեզուներում. անգլերենի լեզվանյութից առանձնացվել է փոխակարգման 8 (**ADJ**→ **N**; **N**→ **V**; **N**→ **ADJ**; **ADJ**→ **N**, **V**; **ADJ**→ **ADV**, **N**; **N**→ **ADJ**, **V**; **V**→ **ADJ**, **N**; **ADJ**→ **V**), իսկ հայերենի նյութից՝ ընդամենը 2 (**ADJ**→ **N**; **N**→ **ADJ**) կաղապար: Ուշագրավ է, որ անգլերենում այսպիսի կաղապարները բնորոշ են բոլոր խոսքի մասերին, իսկ հայերենում՝ միայն գոյականին և ածականին. դա պայմանավորվում է հայերենի բայ և մակբայ խոսքի մասերի կոնկրետ վերջածանցների առկայությամբ:

Առանձին ենթագլխով ներկայացվում են նաև զուգադրվող լեզվական միավորների թարգմանության առանձնահատկությունները, տարբեր թարգմանական հնարների կիրառությունները: Ուսումնասիրված նյութում հանդիպել են *պատճենման*, ինչպես նաև *համարժեք*, *նկարագրական և մոտավոր թարգմանությունների* տեսակներ: Հետաքրքիր է նաև այն, որ ուսումնասիրության արդյունքում հանդիպում են թարգմանական բացեր: Այսպես, հայերենի

ահել/ահիլ, բազմադի, բյուրամյա, երկարարև, դեռաբողբոջ, դեռաբույս, դեռածաղիկ, տղայահասակ, ջահել-ջիվան, կանխահասակ, ծաղկահասակ, ծաղկադի, աղածրի, դեռածին, մադաղաբույս, մադաղածին, մադաղադի, նորածիլ միավորներն ընդհանրապես չունեն իրենց համարժեքներն անգլերենում: Կարծում ենք, որ այս բացերը կարելի է լրացնել հայերենի այսպիսի բառերի հոմանշային շարքից որևէ միավորի համարժեք թարգմանությամբ: Սակայն այսպիսի դեպքերում կորչում են թարգմանվող միավորների ոճային յուրահատկությունները: Հետևաբար, հաճախ երևի թե ավելի նպատակահարմար է տալ դրանց անգլերեն նկարագրական կամ համատեքստային թարգմանությունները, օրինակ՝ *մադաղածին-newly born, երկարարև-having lived long life* և այլն: Հակառակ երևույթը չի նկատվում, քանի որ անգլերենի նյութը ավելի փոքրաթիվ է, քան հայերենինը:

Երկրորդ գլխի վերջին ենթագլխում («Ոճային նշույթավորվածության դրսևորումները «տարիք» իմաստային դաշտում») վերլուծվում են անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտը կազմող ոճականորեն նշույթավորված միավորները, որի արդյունքում վեր են հանվել լեզվաոճական հետաքրքիր տարբերություններ: Ոճական նշույթավորումները ցույց են տալիս բառի

1. *գործածականությունը,*
2. *պարկանելությունը այս կամ այն ոլորտին,*
3. *նորմավորումը,*
4. *սոցիալական բնույթը:*

Նշենք, որ ընդհանուր առմամբ, ոճական նշույթավորման արձանագրումը ավելի բնորոշ է հայերենի, քան անգլերենի բացատրական բառարաններին. եթե անգլերեն նյութից մեզ հետաքրքրող իմաստով դուրս է բերվել նշույթավորված ընդամենը 13 միավոր՝ ընդհանուր 24 նշույթավորված օրինակից, ապա հայերենում այսպիսի օրինակների թիվն ավելի մեծ է. հայերենի «տարիք» իմաստային դաշտից մեզ հետաքրքրող իմաստով առանձնացվել է 36 օրինակ նշույթավորված 57 միավորից: Ավելին, անգլերենի բացատրական բառարաններին բառի նշույթավորումը՝ որպես սոցիալական բնույթ ունեցող, առհասարակ հատուկ չէ: Մեր կարծիքով այս փաստը կարելի է բացատրել «ամերիկյան երազանքին» հասնելու գաղափարից, որը բացառում է անհավասարությունն ու սոցիալական արտոնությունները⁹:

Ուսումնասիրության արդյունքում և՛ անգլերենում, և՛ հայերենում նշվում են նաև այնպիսի բառեր, որոնք, ըստ բառարանային սահմանումների, կիրառվում են որպես դիմելաձևեր: Այդ

⁹ <https://www.mckendree.edu/academics/scholars/issue14/marin.htm>

միավորներն անգլերենում չորսն են, իսկ հայերենում՝ ութը: Դրանք են՝ *miss, baby, father, girl, որդի, զավակ, պապի/կ, տատի/կ, տղա, բիձա, փոքրիկ, օրհորդ*:

Երրորդ գլուխը կրում է «*Տարիք» հասկացության ընկալումը անգլոամերիկյան և հայկական լեզվամշակույթներում*» վերնագիրը: Այստեղ հարցումների միջոցով վեր են հանվում ռուս լեզվաբաններ Մ. Կրոնգաուզի և Ժ. Ֆոմինայի կողմից առաջարկված կայուն և նկարագրական զուգորդումները, որոնք հարցվողները առանձնացրել են այս կամ այն միավորի նկարագրության ժամանակ: Հարցմանը մասնակցել է որևէ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող 18-35 տարեկան հարյուրական լեզվակիր: Վերջիններս կամավոր կերպով լրացրել են Ֆեյսբուք սոցիալական ցանցի համապատասխան հարթակում տեղադրված հարցաթերթիկները:

Այսպես, Մ. Կրոնգաուզն առաջարկում է կայուն զուգորդումների հետևյալ հինգ տեսակները՝

1. *իմաստային հարաբերությունների վրա հիմնված զուգորդումներ,*
2. *հիմնատիպերի վրա հիմնված զուգորդումներ,*
3. *սոցիալական կարծրատիպերի վրա հիմնված զուգորդումներ,*
4. *ժամանակագրական զուգորդումներ,*
5. *փոխաբերական զուգորդումներ*¹⁰:

Ժ. Ֆոմինան առաջարկում է նկարագրական զուգորդումների հետևյալ տեսակները՝

1. *բացատրական,*
2. *գնահատողական,*
3. *համեմատական,*
4. *ժամանակագրական:*

Հարկ է նշել, որ և՛ անգլոամերիկյան, և՛ հայկական մշակույթների կրողներն իրենց զուգորդումներում հիմնականում օգտագործել են բացատրական սահմանումներ. դա կարելի է հիմնավորել նրանով, որ ինչպես «տարիք» իմաստային դաշտում ընդգրկված բոլոր միավորները, այնպես էլ աշխարհում ամեն ինչ կարելի է հեշտությամբ ներկայացնել բացատրական նկարագրություններով և երկարաշունչ նախադասություններով, քան մեկ բառով: Հետաքրքրական է, որ երկու լեզվամշակույթներում էլ բացատրական սահմանումը բավականին բնորոշ է *girl/աղջիկ* (*Young female child. A human, who biologically is female./ իգական սեռի ներկայացուցիչ*) և *boy/տղա*

¹⁰ Տե՛ս Կրոնգաուզ Մ., Семантика, Учебник для вузов, Издательство РГГУ, Москва, 2001, с. 182.

(Young male child. Male not fully developed, young. A human, who biologically is male./արական սեռի ներկայացուցիչ) միավորներին:

Ուշագրավ է նաև այն, որ հայերը դիմելիս մշտապես կիրառում են դիմացինի տարիքը մատնանշող միավորներ՝ կա՛մ փորձելով լինել ավելի հարգալից, կա՛մ ցույց տալով իրենց տարիքային և դիրքի տարբերությունները: Այս երևույթը բնորոշ է անգլոամերիկյան մշակույթին. դա բացատրվում է այն փաստով, որ վերջինիս կրողները ցանկացած իրավիճակում նախընտրում են հավասարազոր հարաբերություններ:

Եվս մեկ յուրահատկություն է նաև այն, որ հարցման մասնակից հայ լեզվակիրները մեծ նշանակություն են տալիս մի կողմից բարեկամական կապերին, իսկ մյուս կողմից՝ բավականին եսակենտրոն են հարցման արդյունքներում, քանի որ մեծ թվով պատասխաններում առկա են «իմ» և «ես» դերանունները կամ «ս» ստացական հոդը: Օրինակ՝ **երեխա-քրոջս տղան, իմ երեխաները, նորածին-եղբորս տղան, երկարակյաց-իմ տատիկը, աղջիկ-ես, տղա-Ռաֆայել, անչափահաս-թոռնիկս, երիտասարդ-իմ երիտասարդությունը, միջահասակ-ես, ծեր-տատիկս ու պապիկս, փոքրահասակ-Լևոն, հասակակից-իմ տարիքի մարդ** և այլն: Հայկական կենցաղում այս երևույթն ունի լայն կիրառություն, քանի որ երբեմն նույնիսկ անծանոթներին հայերը դիմում են, օրինակ՝ «հայր», «մայր», «մորաքույր», «հորեղբայր», «քեռի», «եղբայր» կամ «քույր» բառերով: Անգլոամերիկյան մշակույթին այս երևույթը բնորոշ է, ինչը ցույց տվեցին ոչ միայն հարցման արդյունքները, որտեղ պատասխաններում բացակայում են բարեկամական կապեր անվանող բառերը, այլև լեզվակիրների հետ բազմաթիվ զրույցները, երբ նրանք փաստում էին, որ թեև դիմելիս ժամանակին ավանդաբար գործածվում էին "aunt" կամ "uncle" բառերը, այժմ այս երևույթն իրենց համար դիտվում է որպես հնացած: Այժմյան անգլիացի կամ ամերիկացի երիտասարդները դիմելիս միշտ օգտագործում են կա՛մ ուղղակի անուններ, կա՛մ անգլերեն Mr. (պարոն) և Ms., lady (տիկին) բառերը:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս անելու հետևյալ **եզրահանգումները՝**

1. Ի տարբերություն տարիքային խմբերի հայկական դասակարգման, որտեղ տարիքային փուլերը տարբերակվում են զուտ թվային նշումներով, անգլոամերիկյան դասակարգումը՝ որպես տարիքային առանձին պարբերացումներ, առանձնացնում է նաև մարդու ֆիզիկական հասունացման շրջանները:

2. Ամերիկացի հեղինակներ Ն. Հոուլի և Ուիլ. Շտրաուսի համատեղ կատարած աշխատանքը, որը կրում է «Սերունդների տեսություն» (Generation theory) անվանումը, մշակվել է՝

պատասխանելու այն բարդ հարցերին, թե ինչու է մոտ 20 տարվա տարիքային տարբերությունը սերունդներին տալիս կյանքի բոլոր ոլորտների, այդ թվում լեզվի վերաբերյալ այդքան տարբեր հայացքներ, և ինչպես ճիշտ հասկանալ և պատշաճ հաղորդակցվել տարբեր սերունդների ներկայացուցիչների հետ: Լեզվական առումով կարելի է պնդել, որ շնորհիվ «Սերունդների տեսության»՝ ուսումնասիրվող լեզուները հարստացել են մի շարք նոր բառերով և համալրվել բառերի նոր իմաստներով: Այսպիսով, նշված տեսությունը, ըստ մեզ, բավականին հեռանկարային է ոչ միայն տեսական առումով, այլև հենց իր գործնական և կիրառական արժեքով: Այն, ծագելով սոցիոլոգիայում, այնուհետև մեծ հետաքրքրություն է առաջացրել մի շարք այլ գիտությունների ներկայացուցիչների մոտ՝ ըստ էության դառնալով միջգիտակարգային: Հետևաբար, սույն տեսությունը կարող է դառնալ ուսումնասիրության առարկա ճանաչողական գիտության մեջ մտնող ցանկացած գիտակարգի համար՝ լեզվաբանություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, հասարակական այլ գիտություններ:

3. Երկու լեզուներում էլ իմաստային դաշտի անդամների միջև հարաբերությունների տեսակները համընկնում են: Ստացվում է, որ անգլերենում և հայերենում «տարիք» իմաստ արտահայտող միավորները կատարում են միևնույն գործառույթը, իսկ իմաստային առումով հակադրվում են իրար միայն իրենց բնորոշ որոշակի տարբերակիչ հատկանիշով/հատկանիշներով:

4. «Փոխակարգում» երևույթը՝ որպես բառակազմական միջոց, առկա է ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում, սակայն ավելի բնորոշ է ժամանակակից անգլերենին: Եթե անգլերենում փոխակարգման կաղապարները գործածվում են բոլոր խոսքի մասերի կազմության մեջ, ապա հայերենում փոխակարգումը մեծ մասամբ բնորոշ է գոյականներին և ածականներին: Այս երևույթը պայմանավորվում է հայերենի բայ և մակբայ խոսքի մասերի կոնկրետ վերջածանցների առկայությամբ:

5. Անգլերենում ավելի հազվադեպ կարելի է հանդիպել ոճային տարբերակման, քան հայերենում: Ուսումնասիրության արդյունքում անգլերեն նյութից մեզ հետաքրքրող իմաստով դուրս է բերվել նշույթավորված 13 օրինակ, իսկ հայերենի «տարիք» իմաստային դաշտից՝ 36 միավոր: Թվային այս նիշերը ապացուցում են, որ ժամանակակից անգլերենի բացատրական բառարաններին գրեթե հատուկ չէ բառի ոճային նշույթավորումը: Ավելին, այստեղ պետք է նաև շեշտադրել այն հանգամանքը, որ բառի սոցիալական պատկանելության նշումը բացատրական բառարաններում առհասարակ բնորոշ չէ անգլերենին:

6. Զուգորդային հարցումների արդյունքում պարզ է դառնում, որ անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի մի շարք միջուկային միավորներ, ինչպես, օրինակ, **տղամ/boy, աղջիկ/girl, երիտասարդ/young, ծեր/old, տարիք/age** բառերը համընկնում են բառարաններում նշված իրենց ոչ թե առաջնային, այլ երկրորդական կամ փոխաբերական իմաստներով, ինչպես օրինակ՝ **girl/աղջիկ** (*a female servant or employee / սպասուհի, աղախին*), **old/ծեր** (*showing the effects of time or use: worn, aged, no longer in use: discarded/ ծերունու պես թուլացած, անզոր, թույլ*), **age/տարիք** (*an advanced stage of life/ հասակն առած, տարեց, տարիքոտ*) և այլն: Այս փաստը համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) խոսուն վկան է. դրա հետևանքով սովորաբար կորչում են մշակութային առանձնահատկությունները, ստեղծվում են ընդհանրություններ:

7. Ինչպես ցույց են տալիս մեր կողմից իրականացված զուգորդային հարցումները, և՛ անգլոամերիկյան, և՛ հայկական լեզվամշակույթներում տարիքը բնավ էլ չեզոք հասկացություն չէ, ինչպես այն բացատրվում է բառարաններում (*the length of time that a person has lived or a thing has existed, կյանքի տարիներ, ապրած տարիներ, հասակ*), քանի որ «տարիք» միավորը հարցվողների մոտ առաջացրել է հետևյալ զուգորդումները՝ *wise, experience, կյանքի փորձ, հասունություն*: Այս փաստը վկայում է լեզվամշակույթների, մարդկային մտածելակերպի տարբեր տիպերի որոշակի ընդհանրության մասին:

8. Ուսումնասիրվող երկու մշակույթներում էլ կյանքի ավելի վաղ շրջաններին տրվում են դրական գնահատականներ՝ *cute and innocent, beautiful baby, անհոգ մանկություն, ժպիտներ, կյանքով լեցուն* և այլն, իսկ ծերությանը՝ հակառակը՝ բացասական գնահատողական սահմանումներ՝ *life is over, անկենսունակ, կյանքից հոգնած* և այլն: Կարծում ենք, որ նմանատիպ համընկնումը կապված է մարդկանց՝ դեռևս գոյություն ունեցող կարծրատիպային մտածելակերպի հետ, քանի որ հիմնականում ծերության ժամանակ մարդիկ ձեռք են բերում ֆիզիկական և հոգեկան մի շարք խնդիրներ: Այսպիսի կարծրատիպերը ենթադրություններ են այն մասին, թե յուրաքանչյուր տարիքում մարդն ինչպիսին պետք է լինի, ինչպես պետք է դրսևորի իրեն կամ ինչպիսի փորձությունների միջով պետք է անցնի: Նմանատիպ կարծրատիպերը հաշվի չեն առնում անհատական տարբերությունները, ինչպես նաև ծերաբանության (հերոնտոլոգիա) նորանոր բացահայտումներն ու նվաճումները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ անգլերենի և հայերենի «տարիք» իմաստային դաշտի լեզվաճանաչողական վերլուծությունը թույլ է տալիս վեր հանելու երկու լեզուների փաստական նյութի ընդհանրությունները մի կողմից, և յուրահատկությունները՝ մյուս կողմից,

որոնք պայմանավորված են լեզվակիրների տարբեր աշխարհայացքներով, ազգային մտածելակերպով և լեզվամշակույթով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Աղամյան Մ., **«Տարիք» իմաստ արտահայտող ածականների իմաստային առանձնահատկություններն անգլերենում և հայերենում**, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Երևան, 2016, 1-38, էջ 56-62:

2. Աղամյան Մ., **«Սերունդների տեսության» լեզվանշանագիտական վերլուծություն (հայերենի և անգլերենի նյութի հիման վրա)**, Ռուսագիտության արդի հիմնախնդիրները գիտամեթոդական հանդես, Երևան 2017(3), էջ 114-12:

3. Աղամյան Մ., **«Սերունդների տեսության» եզրույթների իմաստային վերլուծություն**, Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 2018 № 2 (26), էջ 45-51:

4. Աղամյան Մ., **Կայուն զուգորդումները հայերենի և անգլերենի «տարիք» իմաստային դաշտում**, Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 2019(2), էջ 90-99:

5. Աղամյան Մ., **Ներհամակարգային հարաբերությունների տեսակները հայերենի և անգլերենի «տարիք» իմաստային դաշտում**, ԵՄՀ Բանբեր, Երևան 2019(2), էջ 154-165:

6. Աղամյան Մ., **Նկարագրական զուգորդումների լեզվական դրսևորումները «տարիք» իմաստային դաշտում (հայերենի և անգլերենի նյութի հիման վրա)**, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Երևան 2020, էջ 12-23:

7. Աղամյան Մ., **Հայերենի և անգլերենի տարիք ցույց տվող միավորների դասակարգումն ըստ տարիքային սանդղակների**, Բանբեր Երևանի համալսարանի, Լեզվաբանություն, 2021(2), էջ 89-99:

Мариам Артуровна Адамян
ЛИНГВОКОГНИТИВНЫЙ АНАЛИЗ СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ "ВОЗРАСТ" В
АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание”

Защита состоится 28 ноября 2022 года в 15.00 ч. на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им. Р. Ачаряна Национальной академии наук РА по адресу: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15.

Резюме

Семантическое поле "возраст" со своими подгруппами является одной из самых объемных и богатых составляющих в обширном семантическом поле "характеристики человека". В первую очередь, понятие "возраст" имеет общечеловеческое значение, а затем уже национально-культурные особенности, оно достаточно многослойно и достаточно часто может быть представлено в неразрывной связи с другими понятиями.

В данной работе понятие «возраст» рассматривается в рамках когнитивной лингвистики. Делается попытка провести сравнительный анализ соответствующего языкового материала английского и армянского языков, выделив общие черты и особенности языков, осуществив глубокий анализ не только в рамках лишь когнитивной лингвистики, но и сопоставляемых когнитивной науки в целом.

Диссертация состоит из введения, трех глав с подглавами, заключения, списка использованной литературы и приложений. Общий объем работы составляет 184 страницы.

Первая глава озаглавлена ***"Восприятие понятия "возраст" в различных науках"***. В ней рассматриваются определения и толкования данного понятия в различных науках, а также обращается внимание на возникшую в XX веке в социологии "Теория поколений", которая привлекла внимание представителей многих других наук соединив их интересы в единое целое. "Теория поколений" была создана для ответа на тот сложный вопрос, почему двадцатилетняя возрастная разница поколений ведет к такой разнице во взглядах людей, и как осуществить достойное общение разных поколений.

В первой главе представлены также традиционные классификации возрастных периодов принятые в англо-американской и армянской лингвокультурологиях, приводятся результаты их сопоставительного анализа.

Вторая глава, озаглавленная *“Семантические особенности лексических единиц со значением “возраст” в английском и армянском языках”*, состоит из шести подглав и посвящена изучению семантических особенностей языковых единиц со значением “возраст” в сопоставительных языках. В первой подглаве рассматривается понятие «семантическое поле», его внутренняя структура и внутренние отношения на материале английского и армянского языков, проводится детальный компонентный анализ значений лексических единиц, составляющих исследуемое семантическое поле, в результате чего предлагается целый ряд их различных классификаций.

В главе также освещается использование конверсии, а также применение сопоставляемых семантических полей английского и армянского языков различных приёмов перевода. Обращается внимание на различия в принципах стилистической маркированности исследуемых единиц.

Третья глава работы озаглавлена *“Понятие концепта «возраст» в англо-американской и армянской языковых культурах”*. В главе анализируются особенности семантического поля «возраст» в англо-американской и армянской лингвокультурах. С помощью ассоциативных экспериментов выявляются основные типы ассоциаций, предложенные разными учеными, которые респонденты выделяли при описании той или иной единицы. В опросе приняли участие по 100 носителей языка в возрасте от 18 до 35 лет, обучающихся в высших учебных заведениях. Последними были заполнены анкеты, размещенные на соответствующей платформе социальной сети Facebook. Следует отметить, что и англо-американские и армянские респонденты в основном предлагали объяснительные определения. Примечательно и то, что в ответах респондентов армян обычно использовались единицы, указывающие на возраст собеседника своеобразные обращения к нему. Респонденты-армяне всегда старались быть уважительными, подчеркивая разницу в возрасте и положении. Это явление не характерно для англо-американской культуры, что объясняется тем, что ее носители предпочитают равноправные отношения в любой ситуации. Работа завершается подведением итогов и обобщением проведенного анализа, где представлены основные результаты исследования. К работе также прилагаются приложения, в которых обобщается языковой материал, положенный в основу анализа.

Mariam Arthur Adamyan

LINGUO-COGNITIVE ANALYSIS OF THE SEMANTIC FIELD "AGE" IN THE ENGLISH AND ARMENIAN LANGUAGES

Thesis for the scientific degree of a Candidate of Philological Sciences on the specialty 10.02.02 - "General and Comparative Linguistics"

The defense of the thesis will be held on 28 November, 2022 at 15.00, at the session of the Specialized Council on Linguistics 019 SCC (Supreme Certifying Committee) in the Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences, RA (address: 0015, Yerevan, Grigor Lusavorich st.15).

Summary

Semantic field "age" with its subgroups and semantic nuances is perhaps one of the richest and most diverse components of the larger semantic field "human traits". The notion "age" first and foremost has a global importance parallel with national and cultural peculiarities. Being rather multi-layered it may be viewed in close relation with different other notions.

The notion under study is initially viewed within the framework of cognitive linguistics. A detailed analysis of the above-mentioned semantic field on the material of the English and Armenian languages is carried out also from the standpoint of cognitive science in general. An attempt is made to conduct a comparative analysis of the English and Armenian data highlighting the similarities and differences of the two languages.

The dissertation comprises of an introduction, three chapters and their subchapters, conclusions, a list of references, and appendices. The research covers 184 pages in total.

The **first chapter** is entitled "*The notion of "age" in different sciences.*" In this chapter definitions and interpretations of the aforementioned notion given by various sciences are represented. An age-related theory having its roots in sociology of the 20th century which caught the interest of scientists from other fields, bringing them together within the same study is also represented. The "Theory of generations" was developed by the American authors Neil Howe and William Strauss to answer the important questions of why the age difference of about 20 years gives generations such different perspectives on life, and how to find a common language with people who are so different from us.

The classification of major stages of the human lifecycle in Anglo-American and Armenian linguocultures are also provided in the first chapter, together with the results of their comparative analysis.

The **second chapter**, "*Semantic qualities of word units expressing the meaning of "age" in English and Armenian*," is divided into six subchapters and is devoted to the investigation of the semantic characteristics of word units with the meaning of "age" in both languages. This chapter focuses on the notion of a "semantic field" in general, including its structure and internal relations in the English and Armenian languages. It also represents a detailed componential analysis of the meanings of the lexical units that comprise the semantic field. As a result, different classifications are carried out.

Second chapter also discusses the use of conversions and its models in the studied semantic field, as well as various samples of different types of translation transformations. The chapter ends in the comparative analysis of stylistically marked English and Armenian units.

The **third chapter** of the research is entitled "*Perception of the concept of "age" in Anglo-American and Armenian linguocultures*". This chapter explores the unique characteristics of the semantic field "age" in the Anglo-American and Armenian linguocultures through Associative group analysis, as a result of which different types of associative meanings have been distinguished, which the survey participants singled out during the survey while describing a particular word unit. 100 native speakers between the ages of 18 and 35 who were enrolled in any higher education institution participated in the survey. The respondents completed the surveys that were made available on a relevant Facebook social network site. It is worth noting that both Anglo-American and Armenian culture bearers have mainly used explanatory definitions, descriptions and long-winded sentences in their word descriptions.

It's also noteworthy that perhaps out of a wish to be more respectful, Armenian respondents while communicating with others usually highlight age and position distinctions. Due to the Anglo-American culture's preference for equal relations in all circumstances, this phenomenon is not typical of that society.

The paper is concluded with a summary, where the main results of the research are presented. Appendices including English and Armenian data which comprise the basis of the undertaken analysis are also attached to the research.